ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է պետական տուրքի դրույ-քաչափերի գործող համակարգի կիրառման արդյունքում ծագած խնդիրների լուծմամբ: Մասնավորապես, պետական տուրքի գործող դրույքաչափերը և մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայության տեսակները նախատեսվել են դեռևս 2000թ. ՀՀ մաքսային օրենսգրքի շրջանակներում (տվյալ ժամանակահատվածում՝ որպես մաքսային ծառայությունների համար վճարվող մաքսավճարներ): Վերջին տարիների ընթացքում դրանք ըստ էության փոփոխությունների չեն ենթարկվել (կատարվել են միայն ոչ բովանդակային փոփոխություններ), և 2020թ.-ից վերափոխվել են պետական տուրքի՝ միևնույն տեսակներով (անվանումներով) և դրույքաչափերով: Գործող դրույքաչափերը չեն համապատասխանեցվել մաքսային ոլորտի գործող իրավակարգավորումներին, մասնավորապես՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով սահմանված կարգավորումներին, մասնավորապես՝ օրենսգրքի 47-րդ հոդվածով ամրագրված սկզբունքին՝ մաքսավճարների չափը չի կարող գերազանցել մաքսային մարմինների՝ այն գործողությունների իրականացման ծախսերի մոտավոր արժեքը, որոնց համար սահմանվել է այդպիսի վճարը:

Ներկայումս, գործող դրույքաչափերի կիրառման արդյունքում, առաջանում են պետական տուրքի հաշվարկման խնդիրներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք համապատասխանեցված չեն մաքսային օրենսդրության գործող կարգավորումներին, ինչի արդյունքում առաջանում են դրանց տարաբնույթ մեկնաբանման խնդիրներ՝ հաշվի առնելով այն, որ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրության շրջանակներում սահմանված մաքսային գործառնությունների շրջանակը ամբողջությամբ չի ընդգրկում «Պետական տուրքի մասին» օրենքով ներկայումս սահմանված՝ պետական տուրքի տեսակները: Նախագծով առաջարկվում է ինչպես գործող դրույքաչափերի վերանայում, այնպես էլ պետական տուրքի նոր դրույքաչափերի սահմանում՝ մաքսային մարմինների կողմից նախատեսվող գործառնությունների

իրականացման համար, նախատեսվում է նաև պետական տուրքի արտոնությունների շրջանակի որոշակի ընդլայնում:

Նախագծով մասնավորապես նախատեսվում է՝

1) մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների համար գանձվող պետական տուրքի տարանջատում՝ ըստ մաքսային հայտարարագրերի տեսակների (2015թ.-ից կիրառվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով սահմանված իրավակարգավորումները՝ 4 տեսակի մաքսային հայտարարագրեր՝ նախկին օրենսդրությամբ կիրառվող մաքսային փաստաթղթերի փոխարեն).

2) տեղորոշող սարքերով տրանսպորտային միջոցների երթուղու դիտարկման համար պետական տուրքի սահմանում (հաշվի առնելով տվյալ ծառայության մատուցման համար հետագայում նախատեսվող ծախսը).

3) պետական տուրքի վճարման ժամկետների սահմանում՝ պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի համար

4) պետական տուրքի դրույքաչափերի սահմանում մաքսային փորձաքննությունների իրականացման համար

5) պետական տուրքից ազատման արտոնության սահմանում՝ տարանցման հայտարարագրի լրացման համար բավարար կազմով նախնական տեղեկատվություն ներկայացրած անձանց համար:

Մաքսային գործառնությունների համար սահմանված պետական տուրքի գանձման ընդհանրական ձևավորված պատկերը հետևյալն է #

Հազ դրամ

2020թ	**3,378,932**
2021թ	**3,633,726**
2022թ	**4 962,871**
2023թ	**6,217,166**

Պետական տուրք՝ ըստ տեսակների

	Մաքսային ձևակեր-պումների համար	Ապրանք-ների հսկո-ղության/ զննման համար	Ապրանք-ների հսկողության /զննման համար (1	Տրանս-պորտային միջոցի մաքսային	Մաքսայի ն ուղեկց-ման համար	Մաքսա-յին գործառ-նություն-ների	Այլ տեսակներ	ԸՆԴԱՄԵՆԸ

		(մինչև 1 տոննա)	տոննայից ավել)	հսկո-ղություն		համար (ՄՄՕ)		
2021	1,513,511,900	201,930,000	1,069,734,000	532,933,505	12,670,000	40,235,000	262,711,595	3,633,726,000
2022	2,147,898,750	308,734,000	1,213,890,900	702,847,101	670,000	85,462,150	503,368,099	4,962,871,000
2023	2,389,489,400	375,225,000	1,264,978,200	869,508,502	5,910,000	110,921,430	1,201,133,468	6,217,166,000

Համաձայն մաքսային վիճակագրական տվյալների՝ 2023 թվականի ընթացքում մաքսային մարմինների կողմից գրանցվել են թվով՝ 288895 ապրանքային հայտարարագրեր (ներմուծում, արտահանում), որոնց համար փաստացի գանձվել է 2,406 մլրդ ՀՀ դրամ պետական տուրք (առանց տրանսպորտային միջոցի հսկողության համար գանձվող պետական տուրքի): Եթե մաքսային գործառնությունների համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերի առաջարկվող դրույքաչափերը տարածենք նույն դիտարկվող ժամանակահատվածի նկատմամբ, ապա գրանցված թվով 288895 ապրանքային հայտարարագրերից կգանձվեր մոտ 2,372 մլրդ ՀՀ դրամ պետական տուրք:

Եթե նույն մոտեցումը կիրառենք գրանցված տարանցման հայտարարագրերի մասով՝ ապա կստացվի հետևյալը #

Տարանցման հայտարարագիր տեսակ	քանակ	Փաստացի գանձում ՀՀ դրամ	Առաջարկվող դրույքաչափերով գանձման դեպքում ՀՀ դրամ
Տարանցման հայտարարագիր ТТ ИМ	156,779	552,913,000	783,895,000
Տարանցման հայտարարագիր ТТ ТС /արտահանում/	71,945	500,266,000	719,450,000
Տարանցման հայտարարագիր ТТ ТР /ՀՀ-մուտքի կամ ելքի ժամանակ/	972	5,174,700	9,720,000

Տարանցման հայտարարագիր ՏՏ ԲՏ /ՀՀ-ում գրանցված,բացված/	586	2,638,100	5,860,000
Տարանցման հայտարարագիր ՏՏ ԷԿ /ՀՀ-ում գրանցված,բացված/	5,066	40,009,100	50,660,000
ընդամենը	235,348	1,101,000,900	1,569,585,000

Հաշվի առնելով նաև նշված վերլուծությունը (դիտարկվել է միայն հաշվառման ենթակա, մեծամասնություն կազմող գործարքների տեսակները)՝ կարելի է եզրահանգել, որ առաջարկվող փոփոխությունների արդյունքում պետական տուրքի գծով մաքսային ընդհանուր մուտքերը չեն նվազի, փոխարենը՝ կավելանան հաշվելի գործարքների մասով կավելանա շուրջ 0,5 մլրդ ՀՀ դրամի չափով, ինչպես նաև նախագծով նախատեսվող՝ տեղորոշող սարքերով տրանսպորտային միջոցների երթուղու դիտարկման, տրանսպորտային միջոցների ժամանակավոր պահպանության, տրանսպորտային միջոցի մաքսային հայտարարագրման համար սահմանվող պետական տուրքի մասով:

Նախագծի ընդունման, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է դրական ազդեցություն՝ հաշվի առնելով, որ առաջարկվող կարգավորումները կնպաստեն մաքսային ձևակերպումների գործընթացի պարզեցմանը, միատեսակ վարչարարության իրականացմանը:

Կարգավորման առարկան, ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է մաքսային մարմինների կողմից գործառնությունների համար պետական տուրքի գանձման՝ գործող համակարգի կատարելագործում, պետական տուրքից ազատման արտոնությունների շրջանակի ընդլայնում:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագիծն ուղղակիորեն չի բխում ռազմավարական փաստաթղթերից:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից:

Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության վերաբերյալ.

Նախագծի ընդունմամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտություն առկա չէ: